Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
06.08.2010թ. թիվ 1/876Ա որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանը և կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ

Բովանդակություն

Ներածություն 3
Բաժին 1. Ռիսկերը 3
Գլուխ 1. Ռիսկերի դասակարգման և կառավարման անհրաժեշտությունը 3
Գլուխ 2. Երկրի կամ աշխարհագրական ռիսկը 4
Գլուխ 3. Հաճախորդի ռիսկը 5
Գլուխ 4. Գործարքի ռիսկը 6
Գլուխ 5. Ցածր ռիսկի չափանիշները 7
Գլուխ 6. Ռիսկի չափանիշների վրա ազդող հանգամանքները 7
Բաժին 2. Ռիսկերի կանխարգելման միջոցները 8
Գլուխ 7. Ռիսկերի կանխարգելման ներքին դիտարկումների գործառույթը 8
Գլուխ 8. Ռիսկի գնահատման եղանակները 9
Գլուխ 9. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընդհանուր կանոնները 10
Գլուխ 10. Գործարար հարաբերության (ծառայության) ընթացիկ դիտանցումը 11
Գլուխ 11. Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը 12
Գլուխ 12. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը 13
Գլուխ 13. Տեղեկատվության հաշվառման և պահպանման նվազագույն կանոնները 13
Գլուխ 14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հետ կապված պարտավորությունը 14

Ներածություն

1. Սույն ուղեցույցը ներկայացվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա և տարածվում է Օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հաշվետվություն տրամադրող անձ հանդիսացող ռիելթորական գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ ռիելթոր) վրա: Ուղեցույցը ներկայացնում է ռիելթորի համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ նաև՝ ՓԼ/ԱՖ) ռիսկերի առանձնահատուկ չափանիշները և այդ ռիսկերի կանխարգելման մեխանիզմները:
2. Ռիելթորի կողմից ՓԼ/ԱՖ ներհատուկ ռիսկերի բացահայտումը, գնահատումը և դրանց համարժեք կանխարգելիչ գործողությունների կատարումն ունի հետևյալ նպատակները՝
1) ռիելթորը հասարակության և հաճախորդների տեսանկյունից կապահովի իր բարձր վարկանիշը և հեղինակությունն այն իմաստով, որ գործնականում իրականացնում է բացառապես օրինական գործունեություն.
2) ուղեցույցով սահմանվող մեխանիզմներով ռիելթորը կկարողանա տարբերակել իր ռիսկային հաճախորդներին և ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք մի կողմից չեն վնասի իր՝ շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությանը և մյուս կողմից՝ կկանխարգելեն այդպիսի հաճախորդներից բխող և իր համար հնարավոր ռիսկերը.
3) ռիելթորն իրեն կապահովագրի հետագա հնարավոր այնպիսի մեղադրանքներից, որ ներգրավվել կամ նպաստել է փողերի լվացման տարատեսակ սխեմաներին՝ այն հիմնավորմամբ, որ իր մոտ առկա է ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման և կանխարգելման արդյունավետ համակարգ:
3. Ուղեցույցը նաև համապարփակ գործողությունների շրջանակ է սահմանում ռիելթորի համար, որոնց կատարմամբ նա կապահովի իր գործունեության համապատասխանությունն Օրենքի պահանջներին: Օրենքի համաձայն՝ սույն ուղեցույցով սահմանված դրույթները ռիելթորների վրա տարածվում են անշարժ գույքի առուվաճառքի հետ կապված գործարքների մասով:
4. Ուղեցույցում նշված հասկացություններն օգտագործվում են Օրենքով սահմանված հասկացություններին և ձևակերպումներին համապատասխան:

Բաժին 1. Ռիսկերը

Գլուխ 1. Ռիսկերի դասակարգման և կառավարման անհրաժեշտությունը

5. Ռիելթորի համար ՓԼ/ԱՖ ռիսկերը պայմանավորված են բազմաթիվ հանգամանքներով, ներառյալ՝ ռիելթորի մասնագիտական գործունեությունը, հաճախորդների տեսակները և նրանց ինքնությունը, հաճախորդների հետ հարաբերությունների բնույթը և ծառայությունների (սույն ուղեցույցի իմաստով ծառայություն հասկացությունը համապատասխանում է Օրենքի իմաստով գործարար հարաբերություն հասկացությանը) մատուցման եղանակները: Այդ ռիսկերի ու դրանց կանխարգելման մեխանիզմների նվազագույն համապարփակ շրջանակը սահմանված է Օրենքով:

6. Ռիելթորը պետք է հստակեցնի ՓԼ/ԱՖ այն ռիսկերն ու դրանց կանխարգելման միջոցները, որոնք կարող են կիրառական լինել իր գործունեության ընթացքում: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր գործնական դեպք կամ իրավիճակ կարող է ի հայտ բերել նոր ռիսկեր, ուստի նշված կանխարգելման միջոցները պետք է լինեն դինամիկ զարգացող:
7. Ռիելթորի համար կարող են առկա լինել ՓԼ/ԱՖ բարձր կամ ցածր ռիսկի չափանիշներ:
8. Բարձր ռիսկի չափանիշները, իրենց հերթին, դասակարգվում են ըստ երկրի կամ աշխարհագրական, հաճախորդի և գործարքի ռիսկի խմբերի: Ռիսկի չափանիշների այդ խմբերը չպետք է դիտարկվեն առանձին, միմյանցից անջատ իմաստով, քանի որ մի խմբում ընդգրկված բարձր ռիսկի չափանիշը կարող է հանգեցնել մեկ այլ խմբի բարձր ռիսկի չափանիշի առկայության կամ դրա առաջացման հնարավորության: Բացի այդ, հնարավոր է, որ ռիելթորի կողմից մատուցվող միևնույն ծառայությունում միաժամանակ առկա լինեն մեկ կամ մի քանի խմբերում ընդգրկված մեկից ավելի ռիսկերի չափանիշներ:
9. Ռիելթորն իր գիտելիքների և փորձառության հիման վրա պետք է կարողանա հատկորոշել առկա ՓԼ/ԱՖ ռիսկերը, գնահատել դրանցից յուրաքանչյուրը և ամբողջականացնել առաջարկվող կամ մատուցվող ծառայության ռիսկայնության ամփոփ գնահատականը:
10. Սույն ուղեցույցով ներկայացված առանձին տեսակի ռիսկերը նպատակ ունեն՝
1) ներկայացնել ռիսկերի նվազագույն շրջանակ և դրանց հիման վրա առաջարկել ռիսկերի կանխարգելման միջոցների մոդելային փաթեթ.
2) ուղեցույցով սահմանված ռիսկերը սեփական գործունեության տեսանկյունից գնահատելու միջոցով հստակեցնել ռիելթորի համար ներհատուկ ՓԼ/ԱՖ ռիսկերը:

Գլուխ 2. Երկրի կամ աշխարհագրական ռիսկը

11. Որևէ միջազգային կառույցի կողմից չի իրականացվել այնպիսի վերլուծություն, որը հնարավորություն կտա առանձնացնել այս կամ այն երկիրը / աշխարհագրական տարածքը՝ ռիելթորի համար միանշանակորեն և անվերապահ կերպով որպես ՓԼ/ԱՖ ոլորտում ռիսկ ներկայացնող: Այդուհանդերձ, ներքոնշյալ երկրները և տարածքները ՓԼ/ԱՖ տեսանկյունից համարվում են համեմատաբար բարձր ռիսկային՝
1) այն երկրները և տարածքները, որոնք ՄԱԿ-ի կողմից ենթարկվում են պատժամիջոցների, արգելքների կամ այլ նմանատիպ սահմանափակումների[1].
2) ՖԱԹՖ-ի և ՖԱԹՖ-ի տիպի տարածաշրջանային կառույցների կողմից հրապարակված երկրները և տարածքները, որտեղ բացակայում կամ ոչ արդյունավետ է գործում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը[2].
3) միջազգային կառույցների հրապարակած տվյալների համաձայն՝ կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրները և տարածքները[3].

[1] ՄԱԿ-ի Պատժամիջոցների հանձնաժողովի հրապարակած նյութերին հղում է տրված ՖԴԿ պաշտոնական կայք-էջից (www.cba.am/Ֆինանսական դիտարկումների կենտրոն): Նյութերը տեղադրված են www.un.org/sc/committees կայք-էջում:
[2] ՖԱԹՖ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի հայտարարություններին հղում է տրված ՖԴԿ պաշտոնական կայք-էջից (www.cba.am/Ֆինանսական դիտարկումների կենտրոն): Հայտարարությունները տեղադրված են www.fatf-gafi.org, www.coe.int/moneyval կայք-էջերում:

4) ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ցանկերի համաձայն օֆշորային համարվող երկրները և տարածքները[4]:

12. Նշված երկրները և տարածքներն ռիելթորի կողմից պետք է համարվեն բարձր ռիսկային, եթե՝

1) այդտեղ են բնակվում կամ գտնվում հաճախորդները, լիազորված անձինք, իրական շահառուները.

2) այդտեղ է գտնվում գործարքի առարկա հանդիսացող անշարժ գույքը.

3) հաճախորդների եկամտի և (կամ) ունեցվածքի աղբյուրը գտնվում է այդ պետություններում կամ տարածքներում.

4) այդ պետությունները կամ տարածքները հանդիսանում են գործարքի կնքման վայր:

13. Բացի վերը նշվածից՝ ռիելթորը կարող է, ելնելով իր փորձից ու գործունեությունից, որպես բարձր ռիսկային դասակարգել / համարել այնպիսի երկիր կամ աշխարհագրական տարածք, որը ներառված չէ վերը թվարկված չափանիշների շարքում:

Գլուխ 3. Հաճախորդի ռիսկը

14. Յուրաքանչյուր ռիելթոր պետք է հստակ պատկերացնի, թե հաճախորդների որ խումբը կամ կոնկրետ որ հաճախորդն է հանդիսանում ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային: Ռիելթորի համար կարևոր է նաև դիտարկել հաճախորդի հետ կնքվող գործարքի մյուս կողմին, որի բարձր ռիսկայնությունը կարող է ազդել հաճախորդի ռիսկի մակարդակի վրա: Այդ առումով, որպես բարձր ռիսկային հաճախորդ համարվում են՝

1) քաղաքական ազդեցություն ունեցող անձինք[5].

2) այն կորպորատիվ հաճախորդները, որոնց կառավարման մարմինների կառուցվածքն անհիմն բարդ է, կամ որոնց իրական շահառուներին հնարավոր չէ բացահայտել.

3) կանխիկի մեծածավալ շրջանառություն իրականացնող հաճախորդները (օրինակ՝ խաղատներ, բենզալցակայաններ, հյուրանոցային համալիրներ և այլն).

4) շահույթ չհետապնդող (այդ թվում՝ բարեգործական) ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնց հետ կապված՝

ա. այդ կազմակերպություններում առկա չէ կորպորատիվ հստակ կառուցվածք, ինչը հանգեցնում է կիրառման ենթակա օրենսդրությամբ սահմանված պահանջներից էական շեղման և (կամ)

---

[3] Տե՛ս օրինակ www.transparency.org կայք-էջում: Transparency International կազմակերպության հրապարակած տվյալներին հղում է տրված նաև ՖԴԿ պաշտոնական կայք-էջից (www.cba.am/Ֆինանսական դիտարկումների կենտրոն):

[4] Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009թ. հուլիսի 28-ի թիվ 224-Ն որոշումը:

[5] Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումը տրված է Օրենքով, իսկ նրանց վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ տարբեր հանրամատչելի աղբյուրներից, ինչպիսիք են՝ www.google.am կայքի որոնման հնարավորությունը, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական կայք-էջը (www.cia.gov/library/publications/the-world-factbook), տարբեր երկրների համապատասխան պետական մարմինների կայք-էջերը, և այլն: Բացի նշվածներից՝ գոյություն ունեն նաև տարբեր վճարովի տեղեկատվական շտեմարաններ (օրինակ՝ World-Check, Factiva, Accuity), որոնք քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տրամադրում են հնարավոր համակողմանի տեղեկատվություն: Նշված տեղեկատվական աղբյուրներին հղում է տրված ՖԴԿ պաշտոնական կայք-էջից (www.cba.am/Ֆինանսական դիտարկումների կենտրոն):

բ. առկա չէ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմին, որը լիազորված կլինի ստուգելու այդ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը և պատասխանատվություն կիրառելու բացահայտված խախտումների համար.
5) դիտավորյալ կատարված հանցագործության համար դատվածություն ունեցող անձինք, եթե այդ հանգամանքը ռիելթորին հայտնի է դառնում իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու ընթացքում.
6) բազմիցս իրենց բնակության (հաշվառման), գտնվելու կամ գործունեության վայրը փոփոխած անձինք.
7) այնպիսի իրավաբանական անձինք, որոնք տևական ժամանակ փաստացի գործունեություն չեն իրականացրել.
8) կեղծ կազմակերպությունները, որոնք ունենալով պետական գրանցում, չունեն փաստացի գտնվելու վայր կամ չեն իրականացրել գործունեություն:

Գլուխ 4. Գործարքի ռիսկը

15. Ռիելթորների կողմից հաճախորդների համար կատարվող որոշ գործարքներ կարող են հանդիսանալ ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային: Դրանց թվին են դասվում այն դեպքերը, երբ՝
1) առաջարկվում է կատարել այնպիսի գործարք, որում նշված գործարքի գինն ակնհայտորեն ցածր կամ բարձր է գործարքի առարկայի իրական/շուկայական արժեքից (օրինակ՝ ձևակերպել ք. Երևանի կենտրոնում գտնվող 100 ք/մ մակերես ունեցող բնակարանի վաճառքի պայմանագիրը 5 միլիոն դրամ գնով).
2) գույքի գնման և վաճառքի կամ այլ հաջորդական գործարքների միջև առկա է համեմատաբար կարճ ժամանակահատված (օրինակ՝ մեկ կամ մի քանի շաբաթ/ ամիս).
3) գործարքի գումարի միջանկյալ և վերջնական վճարման աղբյուրներն անորոշ են կամ կասկածելի,
4) գործարքի կատարման համար ռիելթորին կամ գործարքի դիմաց հաճախորդին վճարումը առանց հիմնավոր պատճառի իրականացվում է հաճախորդի հետ որևէ փոխկապակցվածություն չունեցող անձի կողմից.
5) կորպորատիվ հաճախորդների կողմից ռիելթորին կամ գործարքի դիմաց մյուս կողմին վճարումը նախատեսվում է կատարել կանխիկ եղանակով.
6) հաճախորդը հայտնում է ակնհայտ կեղծ կամ թերի տեղեկատվություն՝ կատարվող գործարքների իրական նպատակների, դրանց բնույթի և առարկայի վերաբերյալ.
7) հաճախորդը խոստանում է կատարվելիք գործարքների դիմաց վճարել չհիմնավորված բարձր վճար, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական կարողություններ ունեցող հաճախորդը խոստանում է լրավճար՝ գործարքը հաջողությամբ կատարելու դեպքում.
8) կատարվում են հաճախորդի գործարար բնութագրին անկնհայտորեն չհամապատասխանող գործարքներ (օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող հաճախորդը ցանկանում է գնել հյուրանոցային համալիր).
9) գործարքի գինը վճարվում կամ նախատեսվում է վճարել տրոհված (մի քանի գործառնությամբ)՝ առանց դրա որևէ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակի.

10) առաջարկվում կամ կատարվում է ակնհայտորեն կեղծ կամ շինծու գործարք (օրինակ՝ գործող արտադրամասի կամ գրասենյակի հետ կապված կնքվում է անհատույց օգտագործման պայմանագիր):

Գլուխ 5. Ցածր ռիսկի չափանիշները

16. Ռիելթորների կողմից որպես ցածր ռիսկի չափանիշ կարող են համարվել բացառապես հետևյալ հաճախորդները (բացառությամբ՝ այն երկրներում կամ տարածքներում գտնվող կամ բնակվող հաճախորդների, որտեղ բացակայում է կամ ոչ արդյունավետ է գործում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը)՝

1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
2) պետական մարմինները,
3) տեղական ինքնակառավարման մարմինները,
4) պետական ոչ առևտրային կազմակերպությունները,
5) պետական կառավարչական հիմնարկները:

Գլուխ 6. Ռիսկի չափանիշների վրա ազդող հանգամանքները

17. Ռիելթորների մոտ հանդիպող ՓԼ/ԱՖ ոլորտում առկա ռիսկերը և դրանց հակազդմանը տրամադրվող ռեսուրսները կախված են նրանց գործունեության ծավալներից, ոլորտներից, փորձառությունից և այլ հանգամանքներից: Օրինակ, անհատ ռիելթորի ՓԼ/ԱՖ ռիսկերն ու դրանց հակազդմանն ուղղվող ռեսուրսները կտարբերվեն խոշոր ռիելթորական կազմակերպության ռիսկերից ու դրանց հակազդմանն ուղղվող ռեսուրսներից: Հետևաբար, յուրաքանչյուր ռիելթոր պետք է հստակեցնի այն հանգամանքները, որոնք իր գործունեության ընթացքում ազդում են ՓԼ/ԱՖ ռիսկի չափանիշների ձևավորման վրա: Նման հանգամանքների տիպային օրինակներ են՝

1) գործարքի առարկա անշարժ գույքի նպատակային նշանակությունը (օրինակ՝ բնակելի տուն է, թե խոշոր արտադրամաս) և գտնվելու վայրը (օրինակ՝ գտնվում է Երևանի կենտրոնում, թե սահմանամերձ գոտիում).
2) առաջարկվող կամ մատուցվող ծառայությունների բնույթը (մեկանգամյա կամ պարբերական), տևողությունը, կանոնակարգվածությունը և հաճախականությունը.
3) հաճախորդի գործունեության նկատմամբ կիրառվող իրավական ռեժիմի (օրինակ՝ լիցենզավորման, գրանցման կարգեր) խստությունը.
4) հաճախորդի վարկանիշը և գործարար համբավը.
5) ռիելթորական ծառայության ընթացքում հաճախորդի հետ հաղորդակցության եղանակը՝ հեռակա հաղորդակցության կամ առերես շփման միջոցով.
6) հաճախորդի ռեզիդենտությունը, իսկ օտարերկրյա հաճախորդների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հետ նրանց առնչության բնույթը.

7) հաճախորդին ներկայացման հանգամանքները (արդյոք նրան երաշխավորել է մեկ այլ հեղինակավոր կամ ռիելթորին հայտնի անձ, թե նա առանց նախնական պայմանավորվածության դիմել է ռիելթորին).
8) հաճախորդին մատուցվող ծառայությունում մեկից ավելի բարձր կամ ցածր ռիսկի չափանիշների առկայությունը:Բաժին 2. Ռիսկերի կանխարգելման միջոցները

Գլուխ 7. Ռիսկերի կանխարգելման ներքին դիտարկումների գործառույթը

18. Սույն ուղեցույցի 1-ին բաժնով սահմանված ՓԼ/ԱՖ ռիսկերի արդյունավետ կանխարգելման նպատակով ռիելթորը պետք է ներդնի ներքին դիտարկումների գործառույթ: Ընդ որում, այդ գործառույթի պատշաճ իրականացման համար, համաձայն Օրենքի 22-րդ հոդվածի, ռիելթորը պարտավոր է ունենալ ՓԼ/ԱՖ կանխարգելմամբ զբաղվող ներքին դիտարկումների ստորաբաժանում կամ աշխատակից, կամ այդ գործառույթները վերապահել մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձանց (այսուհետ՝ ներքին դիտարկումների մարմին):
19. Հաշվի առնելով, որ ռիելթորի գործունեության ծավալները և մարդկային ռեսուրսները էականորեն զիջում են ֆինանսական հաստատությունների համապատասխան ցուցանիշներին և, բացի այդ, ռիելթորների շրջանակում (անհատ ռիելթորից մինչև ռիելթորական խոշոր ընկերություն) գործունեության ու մարդկային ռեսուրսների ծավալների իմաստով նույնպես առկա են էական տարբերություններ՝ Օրենքի 22-րդ հոդվածը ռիելթորների նկատմամբ կիրառվում է հետևյալ առանձնահատկությամբ՝
1) անհատ ռիելթորի դեպքում ՓԼ/ԱՖ ռիսկերի կանխարգելման ներքին դիտարկումների գործառույթը պետք է իրականացնի ռիելթորն ինքը.
2) մասնագիտական աշխատակազմի առկայության դեպքում այդ գործառույթը կարող է դրվել առանձին աշխատակցի կամ ստորաբաժանման վրա: Այս դեպքում պետք է ապահովվի ներքին դիտարկումների մարմնի անկախությունը և անմիջական հաշվետվողականությունը ռիելթորի կառավարման բարձրագույն մարմնին:
20. Ռիելթորի ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող մարմինը պետք է նվազագույնը իրականացնի հետևյալ գործառույթները՝
1) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերի մշակումը (10-ից ավելի աշխատակից ունենալու դեպքում), այդ ակտերի արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.
2) Օրենքի, սույն ուղեցույցի և ռիելթորի ներքին իրավական ակտերի համաձայն՝ հաճախորդներին և նրանց մատուցվող ծառայությունները ՓԼ/ԱՖ ռիսկայնության տեսանկյունից դասակարգելը, ռիսկերի առանձին տեսակների և դրանց շրջանակներում ռիսկային հաճախորդների և ծառայությունների վերաբերյալ ռիելթորի այլ աշխատակիցներին իրազեկելը.
3) հաճախորդի պատշաճ, այդ թվում՝ հավելյալ և պարզեցված ուսումնասիրության, ինչպես նաև հաճախորդների և նրանց գործարար բնութագրի ընթացիկ դիտանցման, տեղեկատվության հաշվառման, պահպանման և թարմացման գործընթացների կանոնակարգվածությանը և արդյունավետությանը հետևելը.

4) գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հետ կապված վերլուծություններ կատարելը.
5) գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները կամ այլ գույքը սառեցնելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը,
6) կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոն (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվությունների տրամադրումն ապահովելը.
7) սույն բաժնով սահմանված՝ ռիսկերի կանխարգելման այլ միջոցներ իրականացնելը:
21. Ռիելթորի ներքին դիտարկումների գործառույթն իրականացնող մարմնին պետք է ուղղակիորեն և անմիջականորեն հասանելի լինեն ռիելթորի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն:

Գլուխ 8. Ռիսկի գնահատման եղանակները

22. Ռիելթորները պետք է հաճախորդներին ծառայություններ մատուցելուց առաջ, իսկ պայմանագրային ծառայության առկայության դեպքում՝ դրա ամբողջ ընթացքում գնահատեն այդ ծառայության ՓԼ/ԱՖ տեսանկյունից ռիսկայնության ամփոփ պատկերը: Հաճախորդների և ծառայությունների ռիսկայնության գնահատման ժամանակ սույն ուղեցույցի 1-ին բաժնով առաջարկվող ռիսկի չափանիշներն ու դրանց վրա ազդող հանգամանքները հաշվի առնելու համար խորհուրդ է տրվում ղեկավարվել հետևյալ սանդղակով՝

	Ռիսկի վրա ազդող հանգամանքների <u>բացասական</u> պատկեր	*Ռիսկի վրա ազդող հանգամանքների <u>դրական պատկեր</u>*
Բարձր ռիսկի չափանիշ(ներ)ի առկայություն	1	2
Ցածր ռիսկի չափանիշ(ներ)ի առկայություն	3	4

1) <u>1-ին իրավիճակը</u> վկայում է, որ առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը բարձր ռիսկային է: Այստեղ ռիսկի մակարդակը որոշելու համար կարևոր է նաև հաշվի առնել, թե ինչպիսիք են բարձր ռիսկի չափանիշները և այդպիսի քանի չափանիշ է առկա: Այս դեպքում պետք է քննարկվի նաև կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության

մասին Ֆինանսական դիտարկումների կենտրոն հաշվետվություն ներկայացնելու հարցը և անկախ որոշումից, քննարկման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն և պահպանվեն:
2) 2-րդ իրավիճակը վկայում է, որ առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը կարող է լինել բարձր ռիսկային, թեպետ առկա ռիսկ(եր)ի պարագայում դրա վրա ազդող հանգամանքներն ունեն դրական պատկեր: Այս դեպքում նույնպես ռիսկայնության մակարդակը որոշելու համար պետք է հաշվի առնել ինչպես բարձր ռիսկի չափանիշների քանակն ու բնույթը, այնպես էլ այն հանգամանքների ազդեցությունը, որոնք ձևավորում են դրական պատկեր:
3) 3-րդ իրավիճակը վկայում է, որ առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը միջին ռիսկային է, սակայն առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հետագայում այն վերածել բարձր ռիսկայինի: Այս դեպքում կարևոր է պարբերական մոնիտորինգ սահմանել նման ծառայության նկատմամբ, ինչպես նաև իրականացնելու հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն՝ արդյունավետորեն հսկելու ռիսկայնության հնարավոր տատանումները:
4) 4-րդ իրավիճակը վկայում է, որ առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը ցածր ռիսկային է և որևէ նշանակալից հանգամանք չի հուշում դրա հնարավոր բարձր ռիսկայնության մասին:
23. Ընդ որում, եթե առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը պարունակում է միաժամանակ բարձր և ցածր ռիսկի չափանիշներ, ապա դրա հանրագումարային ռիսկայնությունը պետք է որոշվի առկա ռիսկի յուրաքանչյուր չափանիշի բնույթի ու էականության, ինչպես նաև ռիսկի վրա ազդող հանգամանքների պատկերի ուսումնասիրության արդյունքում:

Գլուխ 9. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընդհանուր կանոնները

24. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն կամ «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքը նպատակ ունի երաշխավորել, որ ռիելթորն ունի համապատասխան անհրաժեշտ տեղեկատվություն իր հաճախորդի ինքնության (նույնականացման) վերաբերյալ: Նշվածը վերաբերում է ոչ միայն հաճախորդի, այլև նրա անունից հանդես եկող լիազորված անձի և իրական շահառուի ճանաչմանը (այդպիսի անձանց առկայության դեպքում):
25. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը պետք է իրականացվի առաջարկվող կամ մատուցվող ցանկացած տեսակի և յուրաքանչյուր ծառայության դեպքում՝ անկախ նրանից, թե այդ ծառայությունը բարձր, միջին կամ ցածր ռիսկային է: Պատշաճ ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նոր հաճախորդների, այնպես էլ գոյություն ունեցող հաճախորդների նկատմամբ՝ նրանց մատուցվող ծառայության շրջանակներում:
26. Օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում են ռիելթորի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու դեպքերը, կարգը և պահանջվող նվազագույն փաստաթղթերի ցանկը: Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը բաղկացած է

հետևյալ գործողություններից (յուրաքանչյուր գործողության շրջանակներում ներկայացվող պահանջները սահմանվում են Օրենքի 15-րդ, 16-րդ և 20-րդ հոդվածներով)՝
1) հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) ինքնության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում (նույնականացում) և հավաքագրված տեղեկատվության իսկության ստուգում՝ ըստ Օրենքի 15-րդ հոդվածի.
2) գործարար հարաբերության (ծառայության) ընթացիկ դիտանցում՝ ըստ Օրենքի 16-րդ հոդվածի և սույն ուղեցույցի 10-րդ գլխի.
3) հաճախորդի՝ ռիսկերի վրա հիմնված պատշաճ ուսումնասիրության առանձնահատկություններով պայմանավորված միջոցառումներ՝ ըստ Օրենքի 15-րդ հոդվածի և սույն ուղեցույցի 11-րդ և 12-րդ գլուխների:
27. Ընդ որում, սույն ուղեցույցի 26-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված գործողությունները պետք է կատարվեն նախքան ռիելթորի կողմից հաճախորդին ծառայություններ մատուցելը: Բացառիկ դեպքերում, եթե արդյունավետորեն կանխարգելված է ՓԼ/ԱՖ ռիսկը, և դա անհրաժեշտ է հաճախորդին մատուցվող բնականոն ծառայությունները չխափանելու համար, հաճախորդի ինքնության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և իսկության ստուգման գործողությունները կարող են կատարվել նաև ծառայության մատուցումից հետո խելամիտ ժամկետում՝ առավելագույնը յոթ օրվա ընթացքում:

Գլուխ 10. Գործարար հարաբերության (ծառայության) ընթացիկ դիտանցումը

28. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության անհրաժեշտ գործողություն է հանդիսանում ռիելթորի կողմից գործարար հարաբերության (ծառայության) մատուցման ամբողջ ընթացքում հաճախորդների և նրանց գործարար բնութագրի ընթացիկ դիտանցումը՝ մատուցվող ծառայությունների նպատակի և ենթադրվող բնույթի մասին ամբողջական ու հստակ պատկերացում կազմելու համար: Այդ նպատակով, կախված ռիելթորի կողմից մատուցվող ծառայության ՓԼ/ԱՖ ռիսկայնության մակարդակից՝ նա պետք է ծառայության մատուցման ամբողջ ընթացքում՝
1) ստուգի ծառայության շրջանակներում կատարվող գործարքների միջև առկա փոխադարձ կապը, բացահայտի այդ կապի հնարավոր սխեմաները, ինչպես նաև որոշի, թե ինչ նպատակ են հետապնդում կատարվող գործարքները.
2) ստուգի՝ արդյոք գործարքների էությունը համապատասխանում է հաճախորդի կողմից իրականացվող գործունեության տեսակներին.
3) ճշտի որոշակի միավոր ժամանակահատվածում կատարվող գործարքների տեսակները, հաճախականությունը և ժամանակագրությունը.
4) իրականացնի գործարքի կողմերի, լիազորված անձանց, ինչպես նաև իրական շահառուների հնարավոր փոխկապակցվածության ստուգում.
5) ստուգի՝ արդյոք առկա են այնպիսի գործարքներ, որոնցով հաճախորդը նպատակ է հետապնդում խուսափել հաշվետվություն տրամադրող անձանց կողմից Ֆինանսական դիտարկումների կենտրոն հաշվետվություն տրամադրելու պարտականության կատարումից.

6) ըստ անհրաժեշտության՝ հավաքագրի հաճախորդի եկամտի և (կամ) ունեցվածքի աղբյուրների ու դրանց փոփոխությունների վերաբերյալ հնարավոր ամբողջական տեղեկություններ.
7) համադրի հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը, ծավալները.
8) գնահատի առաջարկվող կամ մատուցվող ծառայությունում առկա ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների չափանիշների և տիպաբանությունների հետ համադրություն իրականացնելու միջոցով:
29. Ռիելթորը պետք է իր սահմանած հաճախականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, թարմացնի հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկատվությունը՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով:

Գլուխ 11. Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը

30. Առաջարկվող կամ մատուցվող ծառայությունը բարձր ռիսկային լինելու դեպքում ռիելթորը, ի լրումն սույն ուղեցույցի 9-րդ գլխով սահմանված պատշաճ ուսումնասիրության գործողությունների, պետք է իրականացնի նաև հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն:
1) Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը պետք է ներառի՝
ա. ավագ ղեկավարության հավանության ստացումը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը, և (կամ) իրական շահառուն բնութագրվում են բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ.
բ. անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը՝ հաճախորդի եկամտի և (կամ) ունեցվածքի աղբյուրը պարզելու համար.
գ. ներքոնշյալ գործարքների հիմքերն ու պայմանները մանրամասն ճշտելը, գրավոր նկարագրելն ու պահպանելը, որպեսզի դրանք հետագայում հնարավորություն տան վերականգնել գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, դրանք տրամադրել իրավասու մարմիններին: Նման գործարքների թվին են պատկանում՝
- բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն.
- այն անձանց ներգրավմամբ գործարքները, որոնք բնակվում (գտնվում) են օտարերկրյա պետություններում կամ տարածքներում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները:
դ. գործարար հարաբերության ընթացիկ հավելյալ դիտանցման իրականացումը:
2) Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը կարող է ներառել՝
ա. ծառայություններ առաջարկելիս և մատուցելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկության առավել ամբողջական ու խորացված ստուգումը.

բ. պետական իրավասու մարմիններին հարցումներ կատարելը՝ հավաստիանալու հաճախորդի, նրա հետ ծառայությունների և գործարքների վերաբերյալ տեղեկությունների ճշտությանը:
31. Հաճախորդի հավելյալ ուսումնասիրության միջոցով ռիելթորը պետք է հիմնավոր պարզաբանումներ ու բացատրություններ ստանա և այդ կերպ իրական ու ամբողջական պատկերացում կազմի տվյալ հաճախորդի, ինչպես նաև նրա հետ կապված՝ առաջարկվող կամ մատուցվող ծառայությունների մասին:

Գլուխ 12. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը

32. Ռիելթորը ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում կարող է իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն:
33. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ռիելթորի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքագրվում են հետևյալ տեղեկությունները՝
1) ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
2) իրավաբանական անձի համար՝ անվանումը և պետական գրանցման համարը.
3) պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ անվանումը:

Գլուխ 13. Տեղեկատվության հաշվառման և պահպանման նվազագույն կանոնները

34. Ռիելթորը սույն ուղեցույցի 9-12-րդ գլուխներով սահմանված տեղեկատվությունը պետք է հաշվառվի ու պահպանվի այնպիսի եղանակով, որը կապահովի յուրաքանչյուր առանձին գործարքի վերականգնումը և այդ տեղեկատվության օգտագործման հնարավորությունը որպես դատավարական ապացույց:
35. Տեղեկատվությունը կարող է պահվել փաստաթղթային կարգով, համակարգիչներում, էլեկտրոնային կրիչներում:
36. Ռիելթորը պետք է ապահովի հաշվառված ու պահպանվող տեղեկատվության անվտանգությունը, գաղտնիությունը և կանխի դրա չթույլատրված օգտագործումը, տնօրինումը:
37. Ռիելթորը պետք է պահպանի Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը, ներառյալ՝ սույն ուղեցույցի 42-րդ կետով սահմանված՝ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը դիտարկելու ընթացքը (կատարված վերլուծությունը) և արդյունքները:

Գլուխ 14. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հետ կապված պարտավորությունը

38. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու պահից հետո ռիելթորը պարտավոր է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:
39. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու համար ռիելթորը պետք է հաշվի առնի կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշները և (կամ) տիպաբանությունները:
40. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվության հետ կապված իրավական պահանջները նախատեսվում են՝
1) Օրենքի 4-7-րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ ռիելթորը պարտավոր է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առկայության դեպքում Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնել հաշվետվություն.
2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009թ. հունվարի 27-ի թիվ 15-Ն որոշմամբ, որով սահմանվում են ռիելթորի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 024 հաշվետվական ձևը, տրամադրման կարգը և ժամկետները, ինչպես նաև ռիելթորի հաշվառման կարգը.
3) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2008թ. սեպտեմբերի 3-ի թիվ 1/886Ա որոշմամբ, որով հաստատվել են հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց, այդ թվում՝ ռիելթորի համար կասկածելի գործարքների չափանիշները:
41. Ռիելթորը կարող է կասկածելի որակել նաև այն գործարքը կամ գործարար հարաբերությունը, որի կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից և (կամ) տիպաբանություններից, սակայն դրա տրամաբանությունը կամ շարժը (դինամիկան) հիմք են տալիս ենթադրելու, որ այն կատարվում կամ հաստատվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:
42. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշի կամ տիպաբանության առկայության դեպքում, ինչպես նաև սույն ուղեցույցի 41-րդ կետով նախատեսված դեպքում ռիելթորը պետք է դիտարկի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հարցը: Դիտարկման արդյունքում, եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվում, դիտարկման ընթացքը (կատարված վերլուծությունը) և արդյունքները փաստաթղթավորվում և պահպանվում են Օրենքով և սույն ուղեցույցով սահմանված կարգով և ժամկետում: